Զի եթէ անմարթ իցէ առնուլ հրովարտակ՝ հայեցեալ 'ի պարագայս ժամանակին, տացեն արձանագրել 'ի դիւանին զիլամն և զՀէօճմէթն, զի մի տացեն հրովարտակ հակառակ Հայոց. քանզի Լատինք 'ի դատին ոչ հանին յերեւան զդաշնագիրն, յոր գրեալ է 'ի տարւոջ միանդամ պատարագել նոցա 'ի ներքոյ դմբեթին։ Զայսոսիկ յոյզս և զխռովութիւնս թէեւ անցուցին Հայք առ ժամն՝ այլ ծանր եղեւ՝ եւ առաջի կայր նոցա այլ իմն մեծ աղմուկ և փոթորիկ 'ի կողմանէ Ցունաց, ոչ միայն վասն Ս. Յարութեան և Ծննդեան, այլ եւ վասն Համբարձման, զի չէնչէին տալ քակել զսենեակսն, զորմէ տեսցուք յետոյ։ Իբրեւ տեսին Լատինք թէ ոչ կարացին վճարել ինչ հրովարտակաւն, դիմեցին առ Փոխարքայն Եգիպտոսի, եւ խնդրեցին 'ի նմանէ կարգել պաշտօնեայս 'ի քննութիւն խնդրոց որ 'ի մէջ Հայոց և Լատինաց։ Եւ նա գրեաց առ Կուսակալն Դամասկոսի՝ առաքել զոք յԵրուսաղէմ. եւ 'ի գալստեան նորա կազմեցաւ ժողով 'ի դատարանի և արձանագրեցան բանք յերկուց կողմանց, զոր թարգմանեալ համառօտելով դիցուք աստանօր։

Նիստ Առաջին, 'ի ՌՄԾԲ Ռիպիլ ախքր ամսոյ, ՌՄԾԲ։

Փոխանորդն և Վարդապետք Հայոց յանդիման եղեն Դատաւորաց եւ խնդրեցին 'ի նոցանէ ծանուցանել ինքեանց թէ՝ քանի են խնդիրք Լատինաց, տալ զպատճէնս հրամանագրոյն Գաւառապետին և պաշտօնական բողոքագրոյն, տեղեկանալ իմաստից նոցին և 'ի միտ առնուլ ըստ խնդիրս, և ըստ այնմ պատրաստել զվաւերական գրեանս և զպատասխանիս արձանագրել ըստ իւրաքանչիւր կարգի։

Դատաւորք ասեն, խնդիրք Լատինաց են այսոքիկ, Գերեզմանն Քրիստոսի և դահլիճն առաջի նորա, մեծ եւ փոքր կապարապատ գմբեթն, Պատանատեղին Քրիստոսի, գերեզմանն Ս. Աստուածածնի ընդ եկեղեցւոյն. Այրն Ծննդեան Քրիստոսի և Մսուրն՝ և բանալիք երից դրանց և մեծ եկեղեցին. փակեալ դուռն Լատինաց. շինութիւնք Համբարձման տեղւոյն 'ի լեառն Զիթենեաց՝ այլովքն հանդերձ, եթէ ունիք վասն սոցին հրովարտակս, Հէօճմէթս